ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» Օգոստոսի 2019 թվականի N 22-Ա

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի օգոստոսի 14-ի նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով օտարելու մասին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. օգոստոսի 14
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» Օգոստոսի 2019 թվականի N 23-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 5-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն՝ Ձորագետ համայնքի վարչական սահմանում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0399 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդ վաճառքով օտարելուն: Օտարվում է հողամաս 1 լոտով.

- Լոտ 1: Ձորագետ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0009-0005 ծածկագրով հողամասը, 0.0399 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք: Հողամասի մեկնարկային գին սահմանել 40000(քառասուն հազար) ՀՀ դրամ:

2.Սահմանել՝ լոտի աճուրդի մասնակցության վճար՝ 5000/հինգ հազար/ ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել աճուրդի հայտարարության հրապարակային ծանուցումը:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. օգոստոսի 14
հ. Ձորագետ